ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> հոկտեմբերի 2014թ.
ք. Եղեգնաձոր,

N 79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ՋԵՐՄՈՒԿԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ ՄԵԾ ԳՐՈՂ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ 728-Ն հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական և կառավարման խորհուրդների որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել <<Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին. դպրոցի կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և հաստատել այն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյանին:

Է. ՂԱԶԱՐՅԱՆ